

ԱՎԱՆՂԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №

Ք. «.....» 20 թ.

<<<ԱՅԷԿՈՆՈՍՏԱՆԿ>> ԲԲԸ-ն, հետագայում **Բանկ**, մի կողմից և(ԻԱ անվանում)
հետագայում **Ավանդատու**, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Ավանդատուն Բանկում ներդնում է

Ավանդ.....գումարիչափով(այսուհետ՝ Ավանդ):
(գումարը թվերով, տառերով, արժույթի տեսակը)

1.2. Ավանդը ներդրվում է օրով՝ «.....» 20.....թ.-ին Ավանդատուի պահանջով Ավանդը վերադարձնելու պայմանով:1.3. Ավանդի դիմաց Բանկը վճարում է տոկոսներ սույն պայմանագրի 2-րդ մասով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:1.4. Ավանդի ներդրման նպատակով Ավանդատուն պարտավորվում է ապահովել Բանկում բացված իր թիվբանկային հաշվին (այսուհետ՝ Ընթացիկ հաշիվ) Ավանդի գումարն ամբողջությամբ և հանձնարարում է Բանկին այդ գումարն անակցեցատ կարգով փոխանցելու իր ավանդային հաշվին: Ավանդի վերադարձը և տոկոսների վճարումը Բանկը կատարում է Ավանդատուի Ընթացիկ հաշվին կամ նրա նշած այլ հաշվին գումարները փոխանցելով:Ավանդատուի ցանկությամբ նրան տրվում է բանկային գրքույկ, որում Բանկի կողմից նշվում է գրքույկը ներկայացնելու պահին ավանդի մնացորդը:

1.5 Եթե Ավանդատուն պահանջում է վերադարձնել ավանդը սույն պայմանագրի 1.2 կետով սահմանված ժամկետից շուտ, ապա ավանդը վերա-դարձվում է Բանկի համաձայնության դեպքում:

2. ԱՎԱՆՂԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՎճԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Ավանդի մնացորդի վրա հաշվարկվում են տոկոսներ տարեկան՝ տոկոսի չափով, փաստացի օրերի դիմաց տարին ընդունելով 365 օր, նահանջ տարին՝ 366 օր:

2.2. Ավանդի տոկոսները հաշվարկվում են Ավանդն Ավանդատուի ավանդային հաշվին փոխանցվելու հաջորդ օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու նախորդ օրը:

2.3. Ավանդի դիմաց հաշվարկված տոկոսները վճարվում են ՀՀ դրամով*՝ :
(ամսական, ժամկետի վերջում)

2.4. Ավանդը կամ դրա մի մասը մինչև սույն պայմանագրի 1.2 կետով նշված ժամկետի լրանալը պահանջելու և Բանկի համաձայնությամբ վերադարձվելու դեպքում՝ սույն պայմանագրի 2.1 կետով սահմանված տոկոսների փոխարեն ավանդի կամ այդ մասի դիմաց հաշվարկվում և վճարվում են* տոկոսագումարներ Բանկում ցպահանջ ավանդի համար տվյալ պահին սահմանված տոկոսների չափով, իսկ եթե արդեն վճարվել են 2.1 կետով սահմանված տոկոսները, ապա ցպահանջ ավանդի տոկոսի չափից ավելի հաշվարկված և Ավանդա-տուին վճարված տոկոսագումարի չափով ավանդը համարվում է վերադարձված: Ցպահանջ ավանդի համար Բանկը հաշվարկում և վճարում է տոկոսներ տարեկան 0 տոկոսի չափով, եթե տոկոսի այլ չափ չի սահմանվում Բանկի Սակագներով:

2.4.1. Եթե ավանդը կամ դրա մի մասը պահանջվել են սույն պայմանագրի երկարաձգված ժամկետում, ապա նախորդ ժամկետի(ների) համար վճարվում են 2.1 կետով սահմանված տոկոսները, իսկ տվյալ ժամկետի համար ավանդի կամ այդ մասի դիմաց հաշվարկվում և վճարվում են տոկոսագումարներ 2.4 կետի համաձայն:

2.5. Ավանդի տոկոսները 2.3 կետով սահմանված ժամկետում չստանալու դեպքում դրանց վրա տոկոսներ չեն հավելագրվում:

2.6. Պայմանագրի 1.2 կետում նշված ժամկետը լրանալուց հետո ավանդը չպահանջելու դեպքում, Պայմանագիրը համարվում է երկարաձգված.

2.6.1. ☐ նույն ժամկետով (այդ թվում՝ շարունակաբար յուրաքանչյուր երկարաձգված ժամկետի ավարտից հետո՝ առավելագույնը երեք անգամ)՝ երկարաձգման պահին տվյալ ավանդատեսակի համար Բանկում գործող պայմաններով:

.....
(Ավանդատուի ստորագրությունը)

* արտարժույթով ներդրված Ավանդի դիմաց հաշվարկված տոկոս-ները ՀՀ դրամի են փոխարկվում վճարման օրը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ արժույթային չուկայում ձևավորված համապատասխան արժույթի միջին փոխարժեքով:

2.6.2. ☐ ցպահանջ ավանդների համար Բանկում գործող պայմաններով:

.....
(Ավանդատուի ստորագրությունը)

Մանրորոշում՝ Ավանդատուն պետք է ընտրի տարբերակներից որևէ մեկը ✓*նշանով* և ստորագրի, իսկ չըտրված տարբերակի ստորագրություն մասը *ճ* տառով:

2.7. Սույն պայմանագրի 2.4 կետով սահմանված ցպահանջ ավանդի տոկոսի չափը նվազեցնելու դեպքում Բանկը կիրառում է այն Ավանդատուին այդ մասին տեղեկացնելուց տասնհինգ օր հետո:

2.8. Ավանդը 274 օր և ավելի ժամկետում վերադարձնելու պայմանով ներդրվելու կամ այդ ժամկետից ոչ պակաս ժամկետով երկարաձգվելու դեպքերում՝ Ավանդատուն կարող է ավելացնել Ավանդին լրացուցիչ գումարներ միայն Ավանդի վերադարձման (երկարաձգված) ժամկետին նախորդող մինչև 180-րդ օրը և ներդրման (երկարաձգման) պահին Ավանդի գումարի մնացորդի չափից ոչ ավելի գումարով, որի դիմաց հաշվարկվում են տոկոսներ Ավանդի դիմաց հաշվարկվող տոկոսների չափով և պայմաններով: Ավանդը 274 օրից պակաս ժամկետում վերադարձնելու պայմանով ներդրվելու դեպքում՝ Ավանդին գումարներ չեն կարող ավելացվել, իսկ նման պայմանով երկարաձգվելու դեպքում՝ գումարներ կարող են ավելացվել միայն երկարաձգման օրը և ոչ ավել Ավանդի մնացորդ գումարի չափից: Ավանդն ավելացնելուց հետո Ավանդի մասի վաղաժամկետ վերադարձման պահանջի դեպքում՝ առաջնահերթ վերադարձվում են Ավանդին ավելացված վերջին գումարները, իսկ դրանց համար սույն պայմանագրի 2.4 կետով սահմանված ցպահանջ տոկոսները հաշվարկվում են դրանք Ավանդին ավելացվելու հաջորդ օրվանից մինչև վաղաժամկետ վերադարձնելու նախորդ օրը:

2.9. Կողմերի համաձայնությամբ Ավանդի ժամկետը սույն պայմանագրի 2.6-րդ կետից բացի այլ պայմաններով կարող է երկարաձգվել Ավանդատուի հետ կնքվող լրացուցիչ համաձայնագրով, որում երկարաձգված ժամկետի համար Ավանդի մնացորդի դիմաց հաշվարկվող տոկոսադրույքը սահմանվում է լրացուցիչ համաձայնագրի կնքման օրվա դրությամբ համապատասխան (երկարաձգվող) ժամկետի համար Բանկում սահմանված տոկոսադրույքի չափով:

2.10. Ավանդի դիմաց Ավանդատուին վճարվող տոկոսները հարկվում են ՀՀ օրենսդրությամբ սահ-մանված չափով:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Բանկը պարտավորվում է՝

3.1.1. Ընդունել ավանդը և վերադարձնել այն, վճարել տոկոսներ սույն պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետներում:

3.1.2. Պահպանել ավանդի գաղտնիությունը՝ օրեն-քով սահմանված կարգով:

3.1.3. Ավանդատուի կողմից պահանջ ներկայացնե-լու դեպքում 5-օրյա ժամկետում տրամադրել հաշվի քաղվածք Բանկի հայտարարած Սակագներով:

3.2. Բանկը իրավունք ունի՝

3.2.1. Ավանդի ընդունման և սպասարկման համար գանձել Ավանդատուից վճարներ Բանկի հայտա-րարած Սակագներով սահմանված չափով:

3.2.2. Ավանդն Ավանդատուին վերադարձնելիս և տոկոսները վճարելիս պահանջել Ավանդատուից ներկայացնելու նրա նույնականացումը հաստատող փաստաթուղթը (անձը հաստատող փաստաթուղթ, ներկայացուցչի դեպքում՝ նրա լիազորագիրը և անձը հաստատող փաստաթուղթը):

3.2.3. Ավանդատուի ներկայացուցչի լիազորու-թյունները չընդունել, եթե դրանք ձևակերպված չեն սույն պայմանագրի 3.3.3 կետին համապատասխան:

3.3 Ավանդատուն պարտավորվում է՝

3.3.1. Ավանդը և տոկոսները ստանալու համար ներկայացնել Բանկին նրա նույնականացումը հաստատող փաստաթուղթը:

3.3.2. Ավանդի ընդունման և սպասարկման համար վճարել Բանկին Բանկի հայտարարած Սակագներ-ով սահմանված չափով գումար:

3.3.3. Իր ներկայացուցչի լիազորությունները հա-վաստել օրենքով սահմանված կարգով տրված լիազորագրով, որը պետք է ձևակերպվի հստակ և հնարավոր լինի նույնացնել մնան պահանջ ներ-կայացնող անձի հետ:

3.4. Ավանդատուն իրավունք ունի՝

3.4.1. Պահանջել Բանկից ավանդի վերադարձ և հաշվեգրված տոկոսների վճարում սույն պայմա-նագրով սահմանված կարգով, չափով և ժամկետ-ներում:

3.4.2. Ավանդին ավելացնել լրացուցիչ դրամական գումարներ սույն պայմանագրի 2.8 կետով սահմանված դեպքում, ժամկետներում և պայմաններով:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Բանկի կողմից Ավանդը վերադարձնելու կամ տոկոսները վճարելու պարտավորությունը չկատարելու կամ ուշացնելու դեպքում՝ յուրաքանչյուր ուշացած օրվա համար Բանկը վճարում է տույժ չվճարված /չվերադարձված/ գումարի 0.02 տոկոսի չափով:

4.2. Բանկը երաշխավորում է Ավանդի վերադարձը իր ակտիվներով:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ավանդը ներդնելու պահից:

5.2. Պայմանագիրը Բանկի կողմից պետք է լինի ստորագրված առնվազն երեք աշխատակցի կող-մից և կնքվի Բանկի կլոր կնիքով:

5.3. Պայմանագրի օրինակը կորցնելու դեպքում Ավանդատուի դիմումով տրվում է պայմանագրի պատճեն:

5.4. Սույն պայմանագրի ցանկացած փոփոխու-թյուն կատարվում է Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

5.5. Սույն պայմանագրով ծագած վեճերը լուծվում են բանակացությունների միջոցով: Համաձայնու-թյան չգալու դեպքում՝ դատական կարգով:

5.6. Պայմանագիրը կնքվել է երկու օրինակից, որից մեկական օրինակ տրամադրվել է յուրաքանչյուր կողմին:

6. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԱՆԿ	ԱՎԱՆԴԱՏՈՒ
<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ	
ք. Երևան Ամիրյան 23/1	ԻԱ անվանում
ՀՎՀՀ 02201405	
ՀՀ ԿԲ գրանցման լիցենզիա թիվ 1	ԻԱ գրանցման հասցե
Ներկայացուցիչ	
Լիազորագիր	ԻԱ գրանցման համար
.....	
ստորագրություն	ԻԱ Ղեկավարի ԱԱՀ
.....	
ստորագրություն	ստորագրություն
.....	
ստորագրություն	